ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 18 » մարտի 2024թ
ք. Եղեգնաձոր

ՀՐԱՄԱՆ N 73

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 100 ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N99 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1080-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2024 թվականի մարտի 14-ի N /45.5/9585-2024 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N100 հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Անվանացանկից հանել (ուժը կորցրած ճանաչել) հետևյալ պաշտոնները.

ա. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման

վարչության ավագ մասնագետ (ծածկագիր՝ 99-30.1-Մ5-1)

բ. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 99-30.1-Մ6-1)

գ. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 99-30.2-Մ2-3)

դ. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ (ծածկագիր՝ 99-30.2-Մ5-2)

ե. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ (ծածկագիր՝ 99-30.4-Մ4-1)

զ. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր տնտեսագետ (ծածկագիր՝ 99-31.1-Մ2-3)

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 20-ի N 120 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին», ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի նոյեմբերի 15-ի N 205 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին » և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019 թվականի դեկտեմբերի 4-ի N 241 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին » հրամաններում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» N99 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի N 99 հրամանի N 7 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 99-30.1-Մ4-1) պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

<<**1.3.** Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները>> կետում << Վարչության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս ավագ մասնագետը կամ գլխավոր մասնագետներից մեկը>> բառերը փոխարինել << Վարչության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը>> բառերով:

2) ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի N 99 հրամանի N 9 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետի (ծածկագիր՝ 99-30.1-Ղ5-1) պաշտոնի անձնագրում՝
<<**1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ**>> կետում <<Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են բաժնի աշխատողները>> բառերը փոխարինել << Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու է բաժնի աշխատողը >> բառերով:
3) ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի N 99 հրամանի N 10 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 99-30.1-Մ3-1) պաշտոնի անձնագրում՝
<<**1.3.** Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները>> կետում << Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը, իսկ դրա անհնարինության դեպքում Բաժնի մասնագետը>> բառերը փոխարինել <<Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը>> բառերով:
4) ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի N 99 հրամանի N13 և N14 հավելվածներով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետների (ծածկագիր՝ 99-30.2-Մ2-1), (ծածկագիր՝ 99-30.2-Մ2-2) պաշտոնի անձնագրերում՝ <<**1.3.** Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները>> կետում << Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր մասնագետներից մեկը կամ ավագ մասնագետներից մեկը>> բառերը փոխարինել <<Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր մասնագետը կամ ավագ մասնագետներից մեկը >> բառերով:

5) ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի N 99 հրամանի թիվ 14 հավելվածով հաստատված Հայաստանի

Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 99-30.2-Մ2-2) պաշտոնի անձնագրի՝

ա. «**2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**» բաժինը 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ կետերով.

«9. Իրականացնում է Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերին՝ համապատասխան գերատեսչություններ և կառույցներ ուղղորդելու աշխատանքները.»,

«10. Իրականացնում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված, անհրաժեշտ միջոցների ձեռնարկման աշխատանքները՝ պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու, նրանց իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում.»,

«11. Իրականացնում է երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի հաստատություն ուղեգրելու և հաստատությունից դուրս գրելու գործընթացը.»:

բ. «Պարտականությունները» բաժինը 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով.

«8. ուսումնասիրել Մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերը, մշակել զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր,.»,

«9.Ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ մասնակցել Մարզում անչափահասների իրավունքների ու շահերի պաշտպանությանը»:

6) ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի N 99 հրամանի N28 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 99-30.4-Մ2-3) պաշտոնի անձնագրի՝

ա. «2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ կետով՝

«13. աջակցում է Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտներին դասագրքերով ապահովելու գործընթացին.>>:

բ. «Պարտականությունները» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ կետով՝

«10. հստակեցնել Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտներին հատկացվող անհրաժեշտ դասագրքերի քանակը, ներկայացնել պահանջ և տրամադրել ըստ անհրաժեշտության.>>:

7) ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի N 99 հրամանի N41 և N42 հավելվածներով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր տնտեսագետների (ծածկագիր՝ 99-31.1-Մ2-1), (ծածկագիր՝ 99-31.1-Մ2-2) պաշտոնի անձնագրերում՝

<<**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**>> կետում << Գլխավոր տնտեսագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր տնտեսագետներից մեկը.>> բառերը փոխարինել <<Գլխավոր տնտեսագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր տնտեսագետը.>> բառերով:

8) ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի ապրիլի 28-ի N 99 հրամանի թիվ 42 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր տնտեսագետի (ծածկագիր՝ 99-31.1-Մ2-2) պաշտոնի անձնագրի «**2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ կետով՝

«10. Իրականացնում է մարզպետի աշխատակազմի ենթակայության հանրակրթական պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացրած տարիֆիկացիոն/վարձաչափային/ մատյանների,տարեկան նախահաշիվների /պետպատվեր և արտաբյուջետային միջոցներ/ և դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները. >>:

3. Հրամանն ուժի է մտնում ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ՝
ՍՐԲՈՒՀԻ ԴԱՎԹՅԱՆ